

(Վերցրած Կ. Պօլսի 1909 թուի ընդարձակ Օրացոյցից.
s. յառաջարան)

ԱԹՈՌ ԱՂԹԱՄԱՐԱՅ

Աթոռակալից	Կարողիկոսներ	Վախնանեցաւ
1114	Դաւիթ Թոռնիկեան ¹	—
—	Գրիգոր	—
—	Յովհաննէս Աղձնեցի	—
—	Ստեփանոս Նկարինայ	1276
—	Խաչատուր Տիարպէքիբցի ²	—
1288	Ստեփաննոս Տղայ Սէֆէտինեան	1292
1292	Եղիշէ Աղբակեցի	1300
1301	Զաքարիա Սէֆէտինեան	1336
1312	Ներսէս աթոռակից	—
1326	Դաւիթ Սէճէսիներեան ⁵	—
1336	Ստեփաննոս Սէֆէտինեան	1346
1346	Դաւիթ Սէֆէտինեան	1368
1369	Ներսէս Բոլատ ⁴	1378
1378	Զաքարիա նահատակ 26 յունիս	1393
1393	Ներսէս ⁵	1395

¹ Աղթամարայ Աթոռին մէջ պահուած Հաւաքարան մը սլաւելի հին ժամանակներու մէջ հաստատուած ցոյց կուտայ այս աթոռը, սակայն եկեղեցական տարեգրութիւնք միայն պահ մը ժ. դարուն մէջ Ընդհանրական կաթողիկոսութեան աթոռ եղած ըլլալը կը հաստատեն և մասնաւոր կաթողիկոսութեան սկիզբը 1114 թուականին կը դնեն, որմէ կը սկսինք մենք ցանկը:

² Անորոշ կը մնան թուականները չորս յաջորդներուն, որոնք Հաւաքարանը ցոյց կուտայ:

⁵ Զաքարիայի կենդանութեան կ'օժուի կաթողիկոս, բայց կը մերժուի յետոյ: 1346-ին վերստին կ'ընտրուի և պաշտօն կը վարէ:

⁴ Հաւաքարանը երկուքին միջև բազմաթիւ անուններ կը յիշէ, որոնք բնաւ հաւանական չէ որ պաշտօն վարած ըլլան:

⁵ Միեւնոյն ժամանակ կը յիշուին նաև ուրիշ անուններ ևս, որոնք չեն կրնար վաւերական համարուիլ: